

5.14. Երկրաբանահետախուզական աշխատանքներ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2002թ. հանրապետությունում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 124.1 մլն. դրամ (2001թ.՝ 61.1 մլն. դրամ), որի 22.8%-ը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից:

2002թ. կատարվել է 1042 մ մեխանիկական հորատում, որից 379 մ՝ սյունակային, 663 մ՝ ոչ սյունակային:

Տարածաշրջանային (ռեգիոնալ) երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալը կազմել է 9.6 մլն. դրամ, որի 49.8%-ը հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական, 38.3%-ն երկրաբանական և 11.9%-ը երկրաֆիզիկական բնույթի են: Այդ աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են ՀՀ պետական բյուջեի հաշվին:

Կատարվել են 19.6 մլն. դրամի աշխատանոցային (տեղերում քարտեզների կազմում, ձևավորում և այլն), 2.7 մլն. դրամի լաբորատոր աշխատանքներ, 1.9 մլն. դրամի տրանսպորտային (անձնակազմի և բեռների տեղափոխում) ծախսեր և 19.0 մլն. դրամի այլ բնույթի աշխատանքներ:

2002թ. ընթացքում ավարտվել է (վերջնական հորատվել է) 18 հորատանցք (2001թ.՝ 36), որոնցից 15-ը՝ 25-100 մ և 3-ը՝ 201-300 մ խորության: Ավարտված հորատանցքերի գումարային խորությունը կազմել է 1042 մ (2001թ.՝ 1328 մ), իսկ միջին խորությունը՝ 57.9 մ (2001թ. 36.9 մ):

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալն ըստ 2002թ. եռամսյակների

	I		II		III		IV	
	2001	2002	2001	2002	2001	2002	2001	2002
Ընդամենը, մլն. դրամ	10.4	22.6	-	28.1	13.9	17.1	36.8	56.3
դրանցից ավելացած արժեքի հարկը	1.7	3.8	-	3.6	2.3	2.0	5.3	7.8
այդ թվում՝								
պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդամենը	-	-	-	-	-	-	-	28.3
դրանցից ավելացած արժեքի հարկը	-	-	-	-	-	-	-	4.3
արտաբյուջետային պայմանագրերով, ընդամենը	10.4	22.6	-	28.1	13.9	17.1	36.8	28.0
դրանցից ավելացած արժեքի հարկը	1.7	3.8	-	3.6	2.3	2.0	5.3	3.5

Երկրաբանահետախուզական աշխատանքներն ըստ բնագավառների և աշխատափուլերի 2002թ.

Բնագավառը	Փաստացի կատարված աշխատանքների ծավալը	Ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝ ըստ փուլերի			
			որոնողական	որոնողա-գնահատողական	նախնական հետախուզական	մանրակրկիտ հետախուզական
Երկրաբանահետախուզական աշխատանքներ, ընդամենը	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	28.3 95.8	23.9	2.4	-	2.0
այդ թվում՝ գումարավոր մետաղներ	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	0.7 15.8	0.7	-	-	15.8
ազնիվ մետաղներ	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	2.7 -	1.7	1.0	-	-
ոչ մետաղներ	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	1.9 29.4	0.5	1.4	-	18.5
տարածաշրջանային (ռեգիոնալ) երկրաբանական, երկրաֆիզիկական, հիդրոերկրաբանական աշխատանքներ	պետբյուջեի հաշվին	21.0	21.0	-	-	-

174 «Հաստատված հանրապետության սոցիալ-տնտեսական փիճակը 2002թ. հունվար-դեկտեմբերին»

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բնագավառը	Փաստացի կատարված աշխատանքների ծավալը	Ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝ ըստ փուլերի			
			որոնողական	որոնողագնահատողական	նախնական հետախուզական	մանրակրկիտ հետախուզական
	արտաբյուջետային միջոցների հաշվին	-	-	-	-	-
հիդրոերկրաբանական և	պետբյուջեի հաշվին	2.0	-	-	-	2.0
ինժեներաերկրաբանական աշխատանքներ	արտաբյուջետային միջոցների հաշվին	50.6	-	-	-	50.6